ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ՇՀԾՁԲ-15/22-16/33» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային ձևով Աբովյանի համայնքապետարանի 2017 թվականի կարիքների համար տրանսպորտային փոխադրման ծառայություններ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

13/01/2017թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ),
Ա. Զոբանյանը (ԳՊ/ԳԱ), Վ. Օհանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Զոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ՇՀԾՁԲ-15/22-16/33» ծածկագրով Աբովյանի համայնքապետարանի 2017 թվականի կարիքների համար տրանսպորտային փոխադրման ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ՇՀԾՁԲ-15/22-16/33» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

Մ. Գուլոյան

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2017 թվականի հունվարի 13-ին, ժամը 10:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնման հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին

Մ. Գուլոյան

2.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի				
Հ/հ	Անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը	Տ/Փ-ի սպացականի հ/հ	Հասցեն
1	«ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ	vagtrans@mail.ru	000033982	Ք. Աբովյան, Հանրապետության 14/1

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

Մ. Գուլոյան

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝				
			Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկված գինը (առանց ԱԱՀ)*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	Տաքսի ծառայություն	«ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ	1 350 000	150 000	1 500 000	-	1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)
2	Ավտոբուսային (միկրոավտո-բուսային) փոխադրումների ծառայություն	«ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ	360 000	40 000	400 000	-	400 000 (չորս հարյուր հազար)

*Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին

Մ. Գուլոյան

4.1 «ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին

Մ. Գուլոյան

5.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

Գնահատել բավարար «ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Ներկայացված և բավարար գնահատված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հետևյալ մասնակցին.

Հ/հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝				
			Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի)*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	Տաքսի ծառայություն	«ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ	1 350 000	150 000	1 500 000	-	1 500 000
2	Աբտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայություն	«ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ	360 000	40 000	400 000	-	400 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. Գնահատող հանձնաժողովի կողմից կատարվելիք գործողությունների մասին

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

6.2 Հրավերի 7.6-րդ կետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ,

քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գոլոյան

անդամներ՝ Ա. Զորանյան

Գ. Խաչատրյան

Լ. Շառաջյան

Վ. Օհանյան

Քարտուղար՝ Տ. Զոհրաբյան